

պաղարիւն սպասուժով մը, սրբագրելու համար «յիմարուժիւնները» հին սուլթաններուն: Մինչեւ 1915, ինծի պատահած է լսել շատ մը թուրքեր, - բժիշկ, դեղագործ, պաշտօնեայ, փաստաբան, մա՛նաւանդ սպայ, որոնց մէջ ոմանք կ'երթային առաջ ո՛չ միայն ծաղրելու մեր ազգային ճիգը, այլ մա՛նաւանդ մեր յիմարուժիւնը, խրմպը- ուժիւնը, օտարին վրայ հաւատալու չափ անմարդկային ցնորատեսուժիւնը, իբր թէ եւրոպացիները չունենային ուրիշ զբաղում: Հայերու բարիքին վրայ մտածելու եւ գործածելու իրենց մեծ-մեծ կազմակերպուժիւնները, դիւանագիտական մեծ ձեռնարկները: Երեսուն տարի առաջ էջը բաւեր յեղափոխական ըլլալու համար ուրանալ մեր թշնամին, ըսել կ'ուզեմ՝ զայն դաւանիլ եւրոպական դիւանագիտուժեան դասական շրջաբանուժեան մէջ, - հիւանդ մարդու, որուն օրերը համրուած էին: Այս տեսակ տրամադրուժիւն մը, անհրաժեշտ ըլլալով հանդերձ, չըմոռցայ սակայն միւս իրականուժիւնը, վտանգին զգայարանքը, քանի որ սահմանը անցնող ամէն հերոսի գըլխուն, ինչպէս մեր ժողովուրդի հաւաքական գոյուժեան վերեւ կախ էր առակին սուրը: Չէր բաւեր զայն վերածել գրական յղացի՞^(*), որպէսզի հնարաւորուժիւն ստեղծուէր

(*) Հաշտ երթալու համար նշանաւոր ընկերային վարդապետութեան մը տոկմային, այսինքն՝ չեգոժացնել, գրեթէ չժացնել, կամաւոր մեղսակցութեամբ, կուրութեամբ, բարբարոսուժիւնը, որ թուրք մեծ ժողովուրդին մօտ տեսակ մը վաղանցուկ spasma է եւ ոչ թէ հոգեյատակի տեսական դրութիւն, արիւնը եւ իր ձայները, որոնք նախնական ժողովուրդներու մէջ կը փոխարինեն իմաստին fonctionnementը, առնուազն ուղեղը: Աւելի՛ն. ուրանալ ետքը այս ահաւոր իրողութիւնները, հաւատալ ուրիշ տրտմութիւններու, այսինքն՝ զարգացման, գիտութեան մէջ բարեխումբն ու մեր թշնամին մեզ ալ սիրող ընծայող ինքնապատիր սուտի, -պարագայ, որ լայնօրէն ապացուցուած է այսօր, երբ ո՛չ միայն Եւրոպայի մէջ կը պաշտպանուին թուրքերը, այլեւ՝ Խորհրդային Հայաստանի մէջ, առանց նկատի ունենալու ուրիշ ծանրակշիռ փաստեր, որոնցմէ մէկն է Պոլսոյ հայերուն հոգիին պարտադրուած պետական ընդարձակ կեդծիքը: Այդ մեր արիւնէն եկող մարդերը իրենց թրքացման պրոցեսը կը հրահրեն թուրքերէն վեր, հեռուէն մեզ ընելով կրկնապէս նկուն: